



Ս. ԳՐԳԻ ԱՐԺԵՔԸ ՆԵՐԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Լերանորոգությունից սկսած մարդիկ միշտ վիճել ու վիճում են Ս. Գրգի արժեքի և նշանակության մասին: Վիճող կողմերից մեկը Ս. Գրգրը ճանաչում է հավատի և մտքի անսխալ չափանիշ, որ պարունակում է աստվածային հավիտենական ցուցումներ մարդուն՝ առաջնորդելու և ղեկավարելու համար: Իսկ մյուսը՝ երես է շրջում Ս. Գրգից ասելով, որ նա հակասում է արդի գիտության ու բանականության և բողոքում է, որ Հռոմի պապի «անսխալականություն» կողքին հանդես է գալիս մի նորը՝ «թղթե քահանայապետի» անսխալականությունը: Այս նույն վիճը Ս. Գրգի շուրջը գոյություն ունի նաև այսօր. ուստի կարևոր է զբաղվել այն հարցով թե՛ ի՞նչ արժեք և նշանակություն ունի Ս. Գրգրը ժամանակակից մարդու համար:

Ներկայիս համար Ս. Գրգի արժեքը զնահատելու և նրա նշանակությունը հասկանալու համար կարևոր է, որ մեր աչքով կարդանք և տեսնենք թե նա իրապես ի՞նչ է ներկայացնում իրենից:

Առաջին հերթին աչքի զարնող երևույթն այն է, որ Ս. Գրգրը մի գիրք չէ, այլ գրքերի ժողովածու. նրա հեղինակը մեկը չէ, այլ շատ մարդիկ. նա մի սրտը և կարճ ժամանակամիջոցի ծնունդ չէ, այլ երկար տարիների Հին կտակարանում գրքեր կան, որոնք գրվել են Քրիստոսից 8-9 դար առաջ. իսկ նոր կտակարանի գրքերից մի քանիսը գրված են Քրիստոսի ծննդից 100 և ավելի տարիներ հետո: Այսպիսով Ս. Գրգրը գրվել է մոտավորապես հազար տարվա ընթացքում: Այս հանգամանքը արժանի է հատուկ ուշադրության, որովհետև սրանով կարելի է պարզել Ս. գրքի հետ կապված շատ խնդիրներ:

Հազար տարին մարդկության պատմության համար փոքր շրջան չէ. մարդիկ հազարամյակի ընթացքում նույնը չեն մընում, նոքա փոխվում ու զարգանում են. փոխվում են նրանց հարաբերությունները և նրանց հայացքները ժրևույթների նկատմամբ: Եթե մտքով տեղափոխվենք 10-րդ դարը, այսինքն մեզանից մոտավորապես հազար տարի առաջ և այն ժամանակվա

մարդու լեզուն, կենցաղը, գիտությունը, աշխարհայացքը համեմատենք մեր ժամանակի մարդու լեզվի, կենցաղի, գիտության, աշխարհայացքի հետ, մենք կտեսնենք, թե ինչպիսի մեծ հառաջադիմություն կա: Ահա այդ զանազանությունը նկատելի է նաև Ս. Գրգի առանձին գրքերի մեջ ևս: Ս. Գրգի ծագման հազարամյա շրջանում էլ տեղի է ունեցել մարդկային կյանքի զարգացում, փոխվել է մարդու աշխարհըմբռնումը. ուստի ինքնին հասկանալի է, որ Ս. Գրգրը կազմող գրքերն էլ, որոնք մի անուն են կրում, պետք է որ միմյանցից զանազանվեն և արտաքին և ներքին պարզաներով: Արտաքինապես տարբերվում են լեզվով. Ս. Գրգի մեջ գտնում ենք երեք տարբեր լեզուներ՝ զարգացման տարբեր աստիճաններով. հին կտակարանի գրքերի մեծագույն մասի լեզուն հասկանալի է այժմ այն չափով, որչափ ներկայիս հայի համար հասկանալի է հին հայոց լեզվով (գրաբար) թարգմանված Ս. Գրգրը:

Ներքինապես տարբերվում են դադարփոխներով. երբ ազգերն այնպես են փոխվում, որ մինչև իսկ նոցա լեզուն բոլորովին փոխվում է իրենց հաջորդ տերմիդներին անհասկանալի դառնալու չափով՝ քնական է, տր փոխվելին նաև մարդկանց մտածելակերպն ու աշխարհայացքը: Ուրեմն չպետք է զարմանալ, երբ Ս. Գրգի այլ և այլ գրքերի աշխարհայացքները զանազան լինեն: Ով այս պարզ երևույթը չի կամենում ընդունել, նա պիտի պնդե, որ հազար տարվա ընթացքում աշխարհն անշարժ ու անփոփոխ է մնացել: Իհարկե ոչ ոք այսօր այդ անհեթեթությունը չի պնդի, քանի որ Ս. Գրգրը կազմող առանձին գրքերի զանազանությունը իրենց աշխարհայացքի տեսակետից՝ կրոնական գիտության կողմից բավարար չափով պարզված է:

Այս հանգամանքները պարզում են, որ Ս. Գրգի բոլոր գաղափարները, հայացքները, ուսմունքները անխտիր ընդունել և դափանել չենք կարող: Մենք չենք կարող այսօր մեզ պարտավոր դալ հավատալու և ուսուցանելու այն ամենը, որ կա Ս. Գրգրում. եվ եթե պահանջ չկա հավատալու և ուսուցանելու առնամենը, որ պարունա-

կում է Ս. Գիրքը, ապա ինչո՞ւմն է կայանում նրա արժեքն ու նշանակությունը մեզ համար:

Այս հարցին պատասխանելու համար պետք է նկատի առնել վերը հիշված հանգամանքը, այն, որ Ս. Գիրքը շատ գրքերի ժողովածուն է, տարբեր հեղինակների խմբագրություն և այլ և այլ ժամանակների ծնունդ. ավելին՝ Ս. Գիրքը հանդիսանում է որպես պատմական հիշատակարան, որպես պատմություն, հատկապես կրոնական պատմություն և հետևաբար նա մեզ համար ունի այն նշանակությունը, ինչ որ ունի պատմությունն ընդհանրապես:

Ս. Գիրքը շոշափում է մարդկության դարգացման ողջ պատմության միայն մի մասը՝ կրոնական պատմությունն իր տիպիկ և արժեքավոր կողմերով: Ս. Գիրքը մեր առաջ բաց է անում հին ժամանակներից սկսած մարդկային հավատի և հոգևոր, ձգտումների և որոնողների, մոլորության և դարձի բազմազան պատկերներ, որոնք հնարավորություն են տալիս մեզ մարդկության հոգևոր աճումն ու զարգացումը տեսնել ու զգալ, վերականգնացնել մեր մեջ նրա անցյալի ապրումները, ապրումներ, որ նա իրապես ունեցել է երբեմն, որով և կապվել է իր Աստծո հետ: Երբ կարդում ենք Ս. Գիրքը և թափանցում նրա խորքը, մենք ընկղմվում ենք հավատո հորձանքի մեջ, որը երբեմն հոսել է մարդկային կյանքի երակներից ու սնել նրան, ինչպես արյունը հոսելով մարմնի միջով սնունդ է տալիս նրան:

Ս. Գրքի պատմվածքները, թող նոքա լինեն թեկուզ և առասպելներ, պարտնալիում են այնպիսի Նույզեր ու ապրումներ, որոնք խորթ չեն նաև այսօրվա մարդուն. տանջանք և ուրախություն, փորձություն և մաքառում, հավատարմություն և դավ, անձնազոհություն և մատնություն, պարկեշտություն և անբարոյականություն, առաքինություն և անառակություն և այլն կարելի է գտնել կենդանի օրինակներով շարադրված Ս. Գրքում: Լինեն դրանք իրական կյանքից առնված, թե մտացածին, միևնույն է, նոքա պատկերում են մարդու ներքին հոգեկան աշխարհը, նրա ապրումները, զգացումները և չեն կարող յազոել մեր զգացմունքների վրա ու ալեկոծել մեր սրտերը:

Սաղմոսները, մարգարեականները, առակները, առածներն ու խրատականները մարդկային հոգու զգացմունքներն են և մարդու մաքառող ու որոնող հոգու ճշմարտություններն են բաց անում մեր

առաջ: Ճշմարիտ է, որ այդ բոլորը միատեսակ չեն ազդում ու ներգործում մեզ վրա: Ս. Գրքում բաներ կան, որ այսօր անընդունելի են մեզ համար. բայց նրանց կողքին կան և շատ բաներ, որոնք խոսում են մեր սրտերի հետ, հուզում մեր ներքին աշխարհը: Խոսենք օրինակներով. երբ Ս. Գրքում կարդում ենք, որ Հեսուն կարծելով որ արևն է պտտում երկրի շուրջը, հրամայում է արևին կանգնել, որպեսզի ինքը թշնամուն ջախջախելով ավարտի հաղթական պատերազմը՝ մենք ընդունել չենք կարող, քանի որ արևը չէ, որ պտտում է երկրի շուրջը, ինչպես կարծում էին Հեսուն և նրանից հետո մարդկությունը մինչև Կոպերնիկոսը, այլ երկիրն է, որ մյուս մոլորակների հետ միասին պտտում է արևի շուրջը, ինչպես ապացուցեց ներկա աստղաբաշխության հայր Կոպերնիկոսը: Բայց երբ Ս. Գիրքը պատմում է Աբրահամի մասին, որը, պատրաստ էր իր որդուն՝ Իսահակին զոհաբերել Աստծուն, այն է իր հոգու սրբությունը, իր պաշտած դադափարին, սա ազդում է մեր զգացմունքների վրա, այնկոծում մեր սիրտը, դատարարակում մեզ, սովորեցնում գաղափարի համար ոչ մի զոհողության առաջ կանգ չառնել և դա մեզ համար ընդունելի է:

Երբ Ս. Գիրքը պատմում է, թե ինչպես Հուդան մատնեց իր վարդապետին, որը միայն անկաշառ սեր էր տաժել դեպի նա, մեր առաջ իր ամբողջ հասակով կանգնում է բարոյապես ընկած մարդը, որի նմանը դժվար չէ գտնել և այսօր. և սա հուզում, ազդում է մեր զգացմունքների վրա, ազնվացնում մեր հոգին, դատարարակում մեզ, հետևաբար սա ևս ընդունելի է:

Ս. Գրքի զգալիանակետը եթե որոնելու լինենք, կգտնենք Հիսուսի անձի մեջ, Ս. Գրքում նա հանդես է գալիս, որպես պատմական անձնավորություն. մենք տեսնում ենք նրա գործերը, լսում նրա խոսքը: Ս. Գիրքն այնպես կենդանի է պատկերում Հիսուսին, որ մեզ և նրան բաժանող երկու հազար տարվա պատենջը փուլ է գալիս և մենք մոտենում ու տեսնում ենք նրան այնպես, ինչպես երբեմն տեսել են նրան իր աշակերտներն ու ժամանակակիցները, մենք տեսնում ենք նրա հոգու պարզությունը, առաքինությունը, ուժը, որոնք ազդում են մեզ վրա այնպես, ինչպես արևի լույսը բույսերի կյանքի վրա:

Ի դեմս Հիսուսի մենք տեսնում ենք մարդու հարազատ պատկերը. նա օժտված էր մարդկային բոլոր հատկություններով, նա մարտնչում էր խավարի, չարի դեմ, հա-

նույն մարդկության լավագույն, ազնիվ գաղափարների և հրահրում մեզ իր օրինակին հետևելու:

Հիսուսի կյանքը իր ուսանելի բոլոր կողմերով հուսահատության, հիասթափության, լքվածության, ծուլության պահերին, խորապես ազդում, փոփոխում, խթանում, ոգևորում, ուժ ու եռանդ է տալիս մեզ: Մեր վրա ազդում է, թեև նվազ չափով, նաև Հիսուսի աշակերտների կյանքը. մենք սրանց մեջ տեսնում ենք Հիսուսի, կյանքը վերակենդանացած և սոցա օրինակն ու ուժը մեզ համար նույնպես հանդիսանում են ոգևորության աղբյուր: Ահա այսպես է ազդում Ս. Գրքը և նրա ազդեցությունն աներևակայելի զորեղ է: Ս. Գրքի մեջ պարունակվող մարդկային հոգու, աստվածային սիրտ ու բարոյության գործող պատմությունն է, որ ազդում է մեր վրա: Պատմությունը մի երկար շղթա է և մենք բոլորս այդ մեծ շղթայի օղակներն ենք: Մենք ծնունդ ենք անցյալի, ապագայն անցյալի քաղաքումը չէ, որ պետք է պահանջներ, այլ նրա փոփոխումն ու դարձացումը: Մենք անցյալից պիտի վերցնենք այն փնտուռակ ուժերը, որոնք այսօր էլ ընդունակ են մեզ վրա ազդելու, բայց միաժամանակ պիտի շարունակենք մեր ճանապարհը և ունենանք մեր այսօրվա կրոնական կյանքը: Մեր հայացքը դարձած պիտի լինի միշտ դեպի այսօրը և նրա հարուցած խնդիրները: Միայն անդայի եզացմունքներով և ապրումներով կերակրվել, անցյալի գաղափարներով առաջնորդվել և՛ անկարելի է և՛ կնշանակե մեկուսանալ կյանքից ու մահվան դատապարտվել:

Կյանքը շարունակ փոխվում, զարգանում է. իսկ ինչո՞ւ մեր կրոնական հայացքները պետք է մնան անփոփոխ ու քաղաքացիական փոփոխում և փոխում պետք է մենք ամուր կառած մնանք այն ամենին, ինչ որ այսօր հակասում է գիտությանը և բանականությանը: Այսօրվա գիտությանը գինված մարդու կրոնական զգացմունքների վրա չի կարելի ազդեցություն գործել Ս. Գրքում նկարագրվող հրաշքների, հրաշապատումների միջոցով: Ժամանակակից մարդու կրոնական զգացումները պետք է խաբսիվեն ոչ թե Ս. Գրքի այդ հրաշապատումների միջոց, այլ այն համամարդկային վսեմ ու վեհ գաղափարների վրա, որոնց քաղաքացիական էր հանդիսանում Հիսուսը: Ս.

Գրքի այդ գաղափարները որքան էլ հին, բայց չափազանց թարմ են և խորթ չեն արդի մարդուն. նրանք ոգևորության, ներշնչման աղբյուր են հանդիսացել ոչ միայն անցյալում, այլ ներկայումս նրանք ազդում, հուզում, ազնվացնում են մարդու հոգին ոչ նվազող չափով:

Ս. Գրքում պարունակվող այդ համամարդկային գաղափարներն այսօր էլ դեռ ներշնչման աղբյուր են հանդիսանում բազմաթիվ արվեստագետների՝ գրողների, նկարիչների, ճարտիշտների համար, որոնք օգտագործում են նրա թեմաները:

Սակայն Ս. Գրքի բոլոր հրաշապատումները չեն որ պետք է մեծթվեն. անցյալում հրաշք ընդունվող շատ երևույթներ, արդի գիտության լույսի տակ բացատրելի են դարձել. օրինակ հիվանդների բուժումը Հիսուսի կողմից, որ հրաշք է համարվում, ներկայումս կարելի է բուրդովին հրաշք չհամարել, քանի որ այժմ բժշկության մեջ մեծ չափով օգտագործվում է բուժման ներշնչման— հիպնոսի մեթոդը:

Արդի մարդու կրոնական զգացմունքների վրա ներգործելու համար Ս. Գրքի մեկնաբանման ժամանակ շեշտը պետք է դնել նրա կրոնա-բարոյական, խրատական, դաստիարակչական, կրթիչ կողմի վրա, իսկ որոշ երևույթներ էլ պետք է լուսաբանել ժամանակակից գիտության տվյալների հիման վրա:

Ամփոփելով մեր ասածները տեսնում ենք, որ Ս. Գրքը, որպես կրոնական պատմություն, իր բոլոր մասերով բացարձակ անսխալ չափանիշ ընդունվել չի կարող, սակայն նա իր բոլոր մասերով գիտության և բանականության էլ չի հակասում, ինչպես պնդում է հակառակորդ հոսանքը և իրեն շոքում:

Ս. Գրքը կրոնական պատմություն է և որպես այդպիսին արժեքավոր է մեզ համար, որովհետև նա իր առողջ սկզբունքներով պետք է նպաստի մեր կրոնական կյանքի կոմմանը:

Ով անդալից ձեռք կբաշի, պատմությունը կմերժի, նա իր ոտքի տակը կփոխի և կզրկվի, նույնպես նաև ով միայն անցյալով ապրել կփորձի, նա քաղաքացիական մահացման ուղին կընթի:

Ահա, Ս. Գրքի արժեքն ու նշանակությունը մեզ համար:

ՎԱՆԱԿԱՆ